acba

ՃԱՆՈՒՑՈՒՄ

ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ

2022 Թ.-Ի ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 15-ԻՑ 20-Ը
ՔՎԵԱՐԿԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ

ԱՌԱՆՑ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՆԵՐԿԱՅՈՒԹՅԱՆ

Ոգեշնչված ձեզնով...

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՒՂԵՐՁԸ 4

ԾԱՆՈՒՑՈՒՄ 5

1 2022Թ. ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՏՈՒԿ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ 6

2 ԺՈՂՈՎԻ ՕՐԱԿԱՐԳԸ 9

3 ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ 10

4 ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԵՐ 11

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՒՂԵՐՁԸ

«Մեր ուժերի նման համախմբումը համահունչ է մեր առաքելությանը՝ նպաստել հասարակության կայուն զարգացմանը»:

ՌԱՖԱՅԵԼ ՍԱՐԳՍՅԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Հարգելի՛ բաժնետերեր,

Ինչպես գիտեք, այս տարվա ապրիլի 28-ին կայացած ԱԿԲԱ բանկի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովում խորհրդի առաջարկությամբ չհաստատվեց բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձը և որոշվեց անցկացնել նոր մրցույթ: Նման որոշման նպատակն էր մրցույթում ապահովել մեկից ավելի մասնակիցներ: Այժմ գոհունակությամբ կարող եմ հայտնել, որ նոր մրցույթին «ԷՐՆՍԹ ԸՆԴ ՅԱՆԳ» ՓԲ ընկերության հետ մեկտեղ մասնակցության առաջարկ ներկայացրեց նաև «ՓՐԱՅՍՈՒՈԹԵՐՀԱՈՒՍԿՈՒՊԵՐՍ ԱՐՄԵՆԻԱ» ՍՊ ընկերությունը, ինչի արդյունքում խորհուրդը ստացավ ընտրության հնարավորություն:

Հավաստիացնում եմ, որ մրցութային հանձնաժողովը գործադրել է բոլոր ջանքերը լավագույն ընտրությունը կատարելու համար: Մասնավորապես, մանրամասն վերլուծվել են առաջարկների տեխնիկական բաղադրիչները և հարցազրույցներ են անցկացվել թիմերի հետ՝ վեր հանելու նրանց ուժեղ և թույլ կողմերը: Բացի այդ, որոշման համար հիմք են հանդիսացել նաև հետևյալ հանգամանքները.

- նախորդող 5 տարիների ընթացքում բանկի արտաքին աուդիտն իրականացրել է միևնույն աուդիտորական ընկերությունը (այն է՝ «Էրնսթ ընդ Յանգ» ընկերությունը), որի պարագայում սովորաբար խորհուրդ է տրվում փոխել արտաքին աուդիտորին.
- բաժնետոմսերի առաջնային հրապարակային տեղաբաշխումից (IPO) հետո նույնպես միջազգային պրակտիկայում լայն տարածված է արտաքին աուդիտորին փոխելու մոտեցումը:

Պետք է նշել, որ գործընթացում ներգրավված է եղել նաև աուդիտի ոլորտում մասնագիտացած խորհրդի անկախ անդամը:

Այդ ամենը հաշվի առնելով՝ որոշվել է հաղթող ճանաչել «ՓՐԱՅՍՈՒՈԹԵՐՀԱՈՒՍԿՈՒՊԵՐՍ ԱՐՄԵՆԻԱ» ՍՊ ընկերությանը: Հետևաբար, առաջարկում ենք ձեզ ԱԿԲԱ բանկի 2022, 2023 և 2024 թվականների տարեկան համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացնելու նպատակով որպես արտաքին աուդիտ իրականացնող անձ հաստատել «ՓՐԱՅՍՈՒՈԹԵՐՀԱՈՒՍԿՈՒՊԵՐՍ ԱՐՄԵՆԻԱ» ՍՊԸ-ին:

Տեղեկացնում եմ, որ բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովը տեղի է ունենալու առանց ձեր ֆիզիկական ներկայության՝ քվեաթերթիկներով (ներառյալ՝ էլեկտրոնային եղանակով) քվեարկելու միջոցով: Ժողովի մասին սույն ծանուցման մեջ դուք կգտնեք ժողովին մասնակցելու և քվեարկելու ընթացակարգերը, օրակարգը և ձեր հաստատմանը ներկայացված որոշման նախագիծը: Ուստի բոլորիդ առաջարկում եմ օգտագործել ձեր ձայները և քվեարկել:

Բանկի խորհրդի անունից շնորհակալություն եմ հայտնում վստահության համար:

ՌԱՖԱՅԵԼ ՍԱՐԳՍՅԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ
Առանց բաժնետերերի ֆիզիկական ներկայության
2022 թվականի հոկտեմբերի 15-ից 20-ը քվեարկելու հնարավորությամբ

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Համաձայն ԱԿԲԱ բանկի խորհրդի 07/09/2022թ.-ի նիստի թիվ 139-2.2 որոշման՝ Բանկի արտաքին աուդիտորական ընկերության նշանակումը հաստատելու համար հրավիրվում է ԱԿԲԱ բանկի բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով:

Բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովը տեղի է ունենալու առանց բաժնետերերի ֆիզիկական ներկայության՝ քվեաթերթիկներով (ներառյալ՝ էլեկտրոնային եղանակով) քվեարկելու միջոցով: Ժողովին գրանցվելը և քվեարկությունը հասանելի են լինելու 2022 թվականի հոկտեմբերի 15-ի ժամը 09:00-ից սկսած մինչև հոկտեմբերի 20-ի ժամը 18:00-ն:

Եթե Ձեր փոխարեն քվեարկելու է ձեր լիազորված անձը, ապա անհրաժեշտ է ներկայացնել նաև օրենքով սահմանված կարգով տրամադրված լիազորագիր:

Ժողովի արդյունքներն ամփոփվելու են 2022 թվականի հոկտեմբերի 25-ին:

ԱԿԲԱ բանկն իր բաժնետերերին հրավիրում է հետևել իր ինտերնետային կայքում կորպորատիվ կառավարմանը նվիրված էջին, որտեղ տեղադրվելու են արտահերթ ընդհանուր ժողովի բոլոր նյութերը: Նշված էջին կարող եք ծանոթանալ հետևյալ հղմամբ: Բանկը ժողովին առնչվող նյութերն ուղարկելու է նաև Ձեր էլեկտրոնային փոստի հասցեներին:

ՀԱՐՑԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Բանկի այն բաժնետերերը, ովքեր ցանկանում են գրավոր եղանակով ուղղել իրենց հուզող հարցերը, կարող են սույն ծանուցման օրվանից մինչև 2022 թվականի հոկտեմբերի 12-ը ներառյալ ուղարկել դրանք էլեկտրոնային փոստի միջոցով՝ **ir@acba.am** էլեկտրոնային փոստի հասցեին կամ փոստային եղանակով Բանկի կենտրոնական գրասենյակ՝ ուղղված Բանկի Խորհրդի նախագահին: Սույն կարգով ներկայացված գրավոր հարցերի պատասխանները 2022 թվականի հոկտեմբերի 15-ին կհրապարակվեն ԱԿԲԱ բանկի կայքում, հետևյալ հղմամբ:

1

2022Թ. ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ

ՔՎԵԱՐԿԵԼՈՒ ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Համաձայն Բանկի խորհրդի 07/09/2022թ.-ի թիվ 139-2.1 որոշման՝ բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեն բոլոր այն բաժնետերերը, անկախ տնօրինվող բաժնետոմսերի քանակից, ովքեր 2022 թվականի սեպտեմբերի 28-ի ժամը 17:00-ի դրությամբ ընդգրկված կլինեն Բանկի բաժնետերերի ռեեստրում և կունենան բաժնետոմսերի անձնական հաշիվներ:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՁԵՎԵՐ

Բաժնետերերը կարող են օգտվել քվեարկելու հետևյալ տարբերակներից.

- **Էլեկտրոնային եղանակով՝** Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի CDAonline բջջային հավելվածի կամ https://online.cda.am կայքի միջոցով, կամ
- **Քվեաթերթիկով՝** քվեաթերթիկը Բանկի հասցեին կամ էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելու միջոցով:

Դուք կարող եք փոփոխել Ձեր որոշումը մինչև 2022 թվականի հոկտեմբերի 20-ի ժամը 18:00-ն էլեկտրոնային եղանակով քվեարկելու դեպքում՝ կրկին քվեարկելու միջոցով, իսկ քվեաթերթիկով քվեարկելու դեպքում՝ նոր քվեաթերթիկ ներկայացնելու միջոցով: Մեկից ավելի անգամ քվեարկելու դեպքում ամենաուշ ներկայացված քվեաթերթիկում արտահայտված դիրքորոշումը կհամարվի վերջնական: Ընդ որում, թղթային տարբերակով քվեաթերթիկով քվեարկելիս քվեարկման ժամ է համարվելու Բանկին կամ փոստին քվեաթերթիկը հանձնելու ժամը:

2022 թվականի հոկտեմբերի 20-ի ժամը 18:00-ից հետո կատարված քվեարկությունը հաշվի չի առնվի:

ՔՎԵԱՐԿՈՒՄՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ

Դուք հնարավորություն ունեք տարեկան ընդհանուր ժողովին քվեարկել էլեկտրոնային եղանակով՝ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի **CDAonline** բջջային կամ վեբ https://online.cda.am հավելվածների միջոցով:

Քվեարկություն կատարելու համար անհրաժեշտ է մուտք գործել վեբ հավելված հետևյալ հղմամբ https://online.cda.am/auth/login կամ ձեր բջջային հավելված և մուտքագրել «**Օգտանունը**» և «**Գաղտնաբառը**» (եթե Դուք դեռևս գրանցված օգտատեր չեք, անհրաժեշտ է նախ և առաջ գրանցվել՝ հետևելով օգտատիրոջ ձեռնարկին https://cda.am/am/document?id=1487):

Քվեարկություն կատարելու համար անհրաժեշտ է էլեկտրոնային քվեարկության բաժնում մուտք գործել «**Ակտիվ**» ենթաբաժինը:



«Ակտիվ» ենթաբաժին մուտք գործելուց հետո անհրաժեշտ է քվեարկության ներկայացված հարցի վերաբերյալ կատարել քվեարկություն՝ սեղմելով քվեարկել կոճակը:

Քննարկման ներկայացված հարցի վերաբերյալ քվեարկելուց հետո անհրաժեշտ է սեղմել «Կատարել քվեարկություն» կոճակը, որից հետո միայն Ձեր քվեարկությունը կհամարվի կատարված:



Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի **CDAonline** բջջային հավելվածի կամ https://online.cda.am կայքի միջոցով քվեարկությունը հասանելի կլինի 2022 թվականի հոկտեմբերի 15-ի ժամը 09:00-ից սկսած մինչև 2022 թվականի հոկտեմբերի 20-ի ժամը 18:00-ն:

ՔՎԵԱՐԿՈՒՄԸ ՔՎԵԱԹԵՐԹԻԿԻ ՄԻՋՈՑՈՎ

Դուք նաև հնարավորություն ունեք արտահերթ ընդհանուր ժողովին քվեարկել քվեաթերթիկի միջոցով: Այդ նպատակով Ձեր կողմից լրացված քվեաթերթիկը պետք է ուղարկվի ԱԿԲԱ բանկի ***ir@acba.am*** *էլեկտրոնային հասցեին կամ ներկայացվի թղթային եղանակով՝ ՀՀ, Երևան, Արամի 82-84 հասցեով:*

Քվեաթերթիկի օրինակը ներկայացված է սույն ծանուցման 5-րդ էջում, ինչպես նաև առանձին ուղարկվելու է Ձեր էլեկտրոնային փոստի հասցեին:

ՔՎԵԱԹԵՐԹԻԿՆԵՐԻ ԼՐԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ:

Քայլ 1:

Ներբեռնեք քվեաթերթիկը և լրացրեք այն:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ:

Քվեաթերթիկը պետք է լրացվի առաջարկվող հետևյալ նշաններով՝ "X" կամ "V":

Յուրաքանչյուր հարցի առնչությամբ պետք է լրացվի առաջարկվող դաշտերից միայն մեկը:

Քվեաթերթիկը չի կարող լրացվել ջնջումներով:

Քվեաթերթիկը կհամարվի անվավեր, եթե այն լրացված չլինի կամ լրացված լինի թերի կամ լրացված լինի սույն հրահանգի պահանջների խախտմամբ կամ ստորագրված չլինի կամ ստորագրված լինի ոչ իրավասու անձի կողմից (ԱԿԲԱ բանկում գրանցված Ձեր էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկվելու դեպքում ստորագրությունը պարտադիր չէ):

Կարևոր. ընտրելուց առաջ խնդրում ենք ծանոթանալ հրահանգներին / Important: Before selecting, please refer to instructions

Անկախ նրանից, թե որ տարբերակն եք ընտրում, նշեք "X" կամ "V", լրացրեք ամսաթիվը և ստորագրեք ներքևում / Whichever option is used, check box(es) like this "X" or "V", date and sign at the bottom of the form

acba **«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ** ՀՀ, ք.Երևան 0002, Արամի 82-84 ir@acba.am **"ACBA BANK" OJSC** 82-84 Aram street 0002, Yerevan RA, ir@acba.am	Բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով 15-ից 20-ը հոկտեմբերի 2022թ. Extraordinary general meeting of shareholders 15-20 October, 2022	**ԱՅՍ ԲԱԺԻՆԸ ՉԼՐԱՑՆԵԼ՝ ՎԵՐԱՊԱՀՎԱԾ Է ՄԻԱՅՆ ԲԱՆԿԻ ՀԱՄԱՐ** **PLEASE DON'T FILL IN THIS PART, FOR BANK'S USE ONLY** Բաժետոմսերի հաշիվ՝ Բաժնետոմսերի քանակ՝

Ծանուցման մեջ ներկայացված որոշման նախագծի վերաբերյալ ես քվեարկում եմ հետևյալ ձևով

I vote on the draft decision submitted in the notice as follows:

Որոշում / Resolution	*N1*	*Կողմ/For* ☐	*Դեմ/Against* ☐	*Ձեռն./Abstain* ☐

Հաշվարկելու համար լրացված քվեաթերթիկը պետք է ուղարկվի կամ վերադարձվի «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ, ոչ ուշ քան 2022 թվականի հոկտեմբերի 20-ը, ժամը 18:00-ն

In order to be considered, this completed form must be sent or returned to "ACBA BANK" OJSC at the latest at 18:00 of 20 October 2022.

Քվեաթերթիկը պետք է լրացվի առաջարկվող հետևյալ նշաններով՝ "X" կամ "V":
Առաջարկվող որոշման վերաբերյալ քվեարկելիս պետք է լրացնել առաջարկվող դաշտերից միայն մեկը:
Քվեաթերթիկը չի կարող լրացվել ջնջումներով:
Քվեաթերթիկը կհամարվի անվավեր, եթե այն լրացված չլինի կամ լրացված լինի սույն հրահանգի պահանջների խախտմամբ կամ ստորագրված չլինի կամ ստորագրված լինի ոչ իրավասու անձի կողմից:

The form must be completed with the following symbols" "X" or "V".
Only one of the suggest fields should be filled in while voting on suggested resolution.
The form must not have any deletions.
The form will be considered as invalid if it is not filled in or filled in by violations of the requirements of the instructions or is not signed or is signed by an unauthorized person.

Անուն, ազգանուն / անվանում *Surname, first name / Entity legal name*	
ՀԾՀ / ՀՎՀՀ *Public services number / Tax IDN*	
Ամսաթիվ *Date*	
*Ստորագրություն** *Signature**	

ԱԿԲԱ բանկում գրանցված Ձեր էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկվելու դեպքում ստորագրությունը պարտադիր չէ / In case of sending from your email address registered in ACBA Bank, the signature is not obligatory

Քայլ 2:

Լրացրեք Ձեր տվյալները

Քայլ 3:

Նշեք ամսաթիվը և ստորագրեք

Քայլ 4:

Ուղարկեք լրացված քվեաթերթիկը

Խնդրում ենք Ձեր կողմից լրացված քվեաթերթիկը հանձնել ԱԿԲԱ բանկին կամ փոստ մինչև 2022 թվականի հոկտեմբերի 20-ի ժամը 18:00-ն: Դրանից հետո ստացված բոլոր քվեաթերթիկները հաշվի չեն առնվելու:

Հարցեր կամ խնդիրներ ունենալու դեպքում կարող եք կապնվել ԱԿԲԱ բանկ յուրաքանչյուր աշխատանքային օր (երկուշաբթիից ուրբաթ) ժամը 09:00-ից 18:00-ն՝ 010 31-88-88 (ներքին՝ 8329) հեռախոսահամարով կամ **ir@acba.am** էլեկտրոնային փոստի միջոցով:

2 ԺՈՂՈՎԻ ՕՐԱԿԱՐԳԸ

01 ԲԱՆԿԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՈՒԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԻՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

ՀԱՐՑ 1-ԻՆ

3 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԸ

Ներկայացված բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովին

01 Բանկի արտաքին աուդիտ իրականացնող անձին հաստատելու մասին

ՀԱՐՑ 1-ԻՆ

ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

Բանկի 2022, 2023 և 2024 թվականների համախմբած ֆինանսական հաշվետվությունների արտաքին աուդիտն իրականացնող կազմակերպության ընտրության համար 2022 թվականի մարտ-ապրիլ ամիսներին անց էր կացվել համապատասխան մրցույթ: Մրցույթի արդյունքում հայտ էր ներկայացրել ընդամենը 1 մասնակից, որի գնառաջարկը համադրելի չէր շուկայական պայմանների հետ: Դրանով պայմանավորված Բանկի խորհուրդը մրցույթում հաղթող չէր ընտրել և առաջարկել էր բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին անցկացնել նոր մրցույթ և դրա արդյունքով հաղթող ճանաչված անձին ներկայացնել բաժնետերերի արտահերթ ժողովի հաստատմանը:

2022 թվականի ապրիլի 28-ին գումարված բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը, հիմք ընդունելով խորհրդի առաջարկությունը, որոշում կայացրեց անցկացնել անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության նոր մրցույթ և դրա արդյունքով հաղթող ճանաչված անձին ներկայացնել բաժնետերերի արտահերթ ժողովի հաստատմանը:

Անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության նոր մրցույթն անցկացվեց 2022 թվականի հուլիս-օգոստոս ամիսներին, իսկ արդյունքներն ամփոփվեցին 07/09/2022թ.-ին տեղի ունեցած խորհրդի նիստին: Անցկացված նոր մրցույթին մասնակցելու հայտեր էին ներկայացրել 2 ընկերություններ՝ «ԷՐՆՍԹ ԸՆԴ ՅԱՆԳ» ՓԲԸ-ն և «ՓՐԱՅՍՈՒՈԹԵՐՀԱՈՒՍԿՈՒՊԵՐՍ ԱՐՄԵՆԻԱ» ՍՊԸ-ն:

Մանրամասն վերլուծելով առաջարկների տեխնիկական բաղադրիչները և հաշվի առնելով աուդիտի թիմերի հետ կազմակերպված հարցազրույցների արդյունքները՝ խորհրդի կողմից մրցույթի հաղթող ճանաչվեց «ՓՐԱՅՍՈՒՈԹԵՐՀԱՈՒՍԿՈՒՊԵՐՍ ԱՐՄԵՆԻԱ» ՍՊԸ-ն:

Որոշումը կայացնելիս խորհուրդը հաշվի է առել նաև այն հանգամանքները, որ նախորդող 5 տարիների ընթացքում բանկի արտաքին աուդիտն իրականացրել է միևնույն աուդիտորական ընկերությունը (այն է՝ «Էրնսթ ընդ Յանգ» ընկերությունը), որի դեպքում սովորաբար խորհուրդ է տրվում փոխել արտաքին աուդիտորին, ինչպես նաև այն, որ բաժնետոմսերի առաջնային հրապարակային տեղաբաշխումից (IPO) հետո նույնպես միջազգային պրակտիկայում լայն տարածված է արտաքին աուդիտորին փոխելու մոտեցումը:

Հետևաբար, բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովին առաջարկվում է Բանկի 2022, 2023 և 2024 թվականների տարեկան համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացնելու նպատակով որպես արտաքին աուդիտ իրականացնող անձ հաստատել «ՓՐԱՅՍՈՒՈԹԵՐՀԱՈՒՍԿՈՒՊԵՐՍ ԱՐՄԵՆԻԱ» ՍՊԸ-ին:

ՈՐՈՇՈՒՄ N 1

Բանկի 2022, 2023 և 2024 թվականների տարեկան համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացնելու նպատակով որպես արտաքին աուդիտ իրականացնող անձ հաստատել «ՓՐԱՅՍՈՒՈԹԵՐՀԱՈՒՍԿՈՒՊԵՐՍ ԱՐՄԵՆԻԱ» ՍՊԸ-ին:

4 ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԵՐ

2022 թվականի հոկտեմբերի 15-ից 20-ը կայանալիք բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի մասնակիցներին տրամադրվում են հետևյալ նյութերը.

1. «ՓՐԱՅՍՈՒՈԹԵՐՀԱՈՒՍԿՈՒՊԵՐՍ ԱՐՄԵՆԻԱ» ՍՊԸ կողմից ներկայացված ամփոփ առաջարկը:

Կառուցենք ապագան միասին

«ԱԿԲԱ Բանկ» ԲԲԸ և «Ակբա Լիզինգ» վարկային կազմակերպություն ՓԲԸ

PwC-ի աուդիտորական ծառայությունների մատուցման առաջարկ
2022թ. օգոստոս

ՓրայսուոթերհաուսԿուպերս Արմենիա ՍՊԸ
Հայաստան, Վազգեն Սարգսյան 2, ԿԱՄԱՐ բիզնես կենտրոն, 8-րդ հարկ, Երևան 0010, T: (+374 10) 51 21 51, F:: (+374 10) 52 10 00, www.pwc.com/am

Այգուլե Ախմետովա
Աուդիտի գործընկեր
aigule.akhmetova@pwc.com

15 օգոստոսի 2022թ

Աուդիտորական ծառայությունների մատուցման առաջարկ

Հարգելի պարոնայք,

Շնորհակալություն ենք հայտնում ԱԿԲԱ ԲԱՆԿ ԲԲԸ-ին (այսուհետ՝ «ԱԿԲԱ Բանկ» կամ «Բանկ») և նրա դուստր ձեռնակությանը՝ «ԱԿԲԱ Լիզինգ Վարկային Կազմակերպություն» ՓԲԸ-ին (այսուհետ՝ «ԱԿԲԱ Լիզինգ») աուդիտի և եռամսյակային դիտարկման ծառայությունների մատուցման մեր առաջարկը ներկայացնելու հնարավորության համար: Ստորև ներկայացված է մեր առաջարկը 2022թ., 2023թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող երեք տարիների համար Բանկի համախմբված ֆինանսական հաշվետվությունների և ԱԿԲԱ Լիզինգի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի իրականացման, ինչպես նաև նույն ժամանակաշրջանների համար Բանկի՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին («ՖՀՄՍ») և «Միջանկյալ ֆինանսական հաշվետվություններ» հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտ 34-ին համապատասխան պատրաստված եռամսյակային ֆինանսական հաշվետվությունների դիտարկման ծառայությունների մատուցման վերաբերյալ:

Մեր առաջարկը մշակելիս մենք հիմք ենք ընդունել մեր ըմբռնումը ձեր պահանջների և ձեր ռազմավարական նպատակների և խնդիրների վերաբերյալ, ինչպես նաև ԱՊՀ երկրների խոշորագույն բանկերում նմանատիպ ծրագրերի իրականացման մեր եզակի փորձը, որը համապատասխանում է որակի ամենաբարձր ստանդարտներին:

Մենք շահագրգռված ենք ձեզ հետ հաստատել վստահության և համագործակցության վրա հիմնված երկարաժամկետ հարաբերություններ, և վստահ ենք, որ ունենք ձեր պահանջներին լիովին համապատասխանող, բարձրորակ մասնագիտական ծառայություններ մատուցելու համար բոլոր կարողությունները:

Ավելին, ցանկանում ենք նաև ընդգծել ծրագրի իրականացման համար բարձր որակավորում ունեցող և փորձառու թիմ ապահովելու մեր պատրաստակամությունը: Այն բաղկացած է PwC Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի (CEE) փորձառու մասնագետներից:

Հարգանքով,

Այգուլե Ախմետովա, Աուդիտի գործընկեր

Ալեքսեյ Ռուսանով
Գործադիր տնօրեն
alexey.n.rusanov@pwc.com

Հարգելի պարոնայք,

Շնորհակալություն ենք հայտնում «ԱԿԲԱ Բանկ» ԲԲԸ-ի և «Ակբա Լիզինգ» վարկային կազմակերպություն ՓԲԸ-ին աուդիտի և եռամսյակային դիտարկման ծառայությունների առաջարկ ներկայացնելու հնարավորությունը մեզ ընձեռելու համար:

Մենք իսկապես շահագրգռված ենք աշխատել Բանկի և ԱԿԲԱ Լիզինգի հետ և կգործադրենք բոլոր ջանքերը՝ ձեզ բարձրորակ ծառայություններ մատուցելու և համաձայնեցված ժամկետներում աուդիտն իրականացնելու համար: Մենք բոլոր ջանքերը կգործադրենք՝ ապահովելու, որ աուդիտորական ծառայությունների մատուցման ընթացքում մեզ հետ համագործակցությունը դրական փորձ հանդիսանա և արժեք ավելացնի ձեր բիզնեսի համար:

Վստահ եմ, որ մեր փորձը և գիտելիքները կօգնեն մեզ պլանավորել և իրականացնել Բանկի համախմբված ֆինանսական հաշվետվությունների և 2022, 2023 և 2024 թթ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարիների ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, ինչպես նաև Բանկի եռամսյակային ֆինանսական հաշվետվությունների վերանայումը:

Մենք ուրախ կլինենք քննարկել մեր առաջարկը և շարունակել հեռախոսով կամ անձամբ ավելի մանրամասն քննարկումները ծրագրի մանրամասների և ձեր ակնկալիքների շուրջ: Բոլոր հարցերի դեպքում խնդրում եմ կապվել անմիջականորեն ինձ հետ +374 (99) 93 20 65 հեռախոսահամարով կամ էլ. փոստով՝ alexey.n.rusanov@pwc.com:

Հարգանքով,

Ալեքսեյ Ռուսանով, Տնօրեն

Մեր առաջարկի արժեքավորությունը Բանկի և ԱԿԲԱ Լիզինգի համար՝ մեկ հայացքով

Այն արժեքը, որը դուք ակնկալում եք PwC-ից	Ինչպես ենք մենք նախատեսում ապահովել	Օգուտներ ձեզ համար
Սահուն անցում նոր աուդիտորի	• Մենք խորապես ծանոթ ենք Հայաստանի բանկային և ֆինանսական հաստատությունների համակարգին • Մանրամասն անցումային պլան	• Նոր տեսանկյուն • Անխափան անցում • Նոր հմտությունների և գիտելիքների փոխանակում
Ժամկետների պահպանում	• Ծրագրի մանրամասն ժամանակացույցի և Առանցքային արդյունքների պլանի համաձայնեցում ձեզ հետ • Ձեր բիզնեսի կառուցվածքին համահունչ կազմված թիմ	• Բաժնետերերին և պետական մարմիններին աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների տրամադրման նվազագույնի հասցված հետաձգումներ • Ժամանակին ներկայացված ֆինանսական տեղեկատվություն՝ որպես ավելի կատրաելագործված և արագ բիզնես որոշումների կայացման համար անհրաժեշտ հարթակ • Անակնկալ ուշացումների բացառում, որը կհանգեցնի անհիմն ժամանակածախսերի սահմանափակման
Խորը գիտելիքներ Հայաստանի բանկային և ֆինանսական ծառայությունների առանձնահատկությունները՝ի վերաբերյալ	• Բանկի, ԱԿԲԱ Լիզինգի, ինչպես նաև Հայաստանի բանկային և ֆինանսական ծառայությունների ոլորտին բնորոշ հաշվապահական հաշվառման հարցերի վաղ քննարկում և լուծում	• Ձեր անձնակազմի անդամների ուշադրության կենտրոնացում ռազմավարական կարևոր խնդիրների վրա և ներգրավում աուդիտում միայն ըստ անհրաժեշտության • Արդյունավետ և նպատակային աուդիտի գործընթաց, որը բխում է աուդիտորական թիմի փորձից Հայաստանի բանկային և ֆինանսական ծառայությունների ոլորտի և ՖՀՄՍ-ի գործնական կիրառման փորձնական գիտելիքներից (ներառյալ ՖՀՄՍ 9):
ՖՀՄՍ 9 գործնական փորձառություն	• Մենք օգնել և աջակցել ենք հայկական բանկերին ՖՀՄՍ 9-ին անցման ուղղությամբ	• ՖՀՄՍ 9-ի խորացված գործնական փորձ և գիտելիքներ • Հասցեական, ապացուցված աուդիտի մոտեցում • Գործունակ առաջարկություններ և լուծումներ
Որակավորված թիմ	• Ոլորտային, աուդիտի և հաշվապահական հաշվառման համապատասխան փորձ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում, ԱՊՀ-ում, և մասնավորապես Հայաստանում	• Ձեր թիմի մասնագիտական զարգացում՝ Հայաստանի և Եվրասիայի տարածաշրջանի հմուտ մասնագետներից կառուցված աուդիտի թիմի հետ գիտելիքների և փորձի փոխանակման, քննարկումների և համատեղ աշխատելու միջոցով • Ամենօրյա և մշտական հաղորդակցություն աուդիտորների հետ • Նախկինում հայկական բանկերի և ֆինանսական հաստատությունների հետ աշխատանքի ծավալուն փորձ ունեցող առաջադրանքի թիմ
Հստակ Հաղորդակցություն	• Աուդիտի ընթացքում կանոնավոր հանդիպումներ առաջընթացի քննարկման համար՝ ներառված Ծրագրի ժամանակացույցում և Առանցքային արդյունքների պլանում	• Հնարավորություն է տալիս յուրաքանչյուր կողմին արդյունավետ կերպով ըմբռնում ձևավորել հիմնական հարցերի շուրջ և, հետևաբար, առաջադիմել միասին որպես թիմ • PwC-ի հետ աշխատելու դրական փորձ ձեր անձնակազմի անդամների համար
Որակյալ ֆինանսական հաշվետվություններ	• ՖՀՄՍ հարցերով խորհրդատվական գործընկեր PwC Արմենիայի միջոցով ԱԿԲԱ Բանկի և ԱԿԲԱ Լիզինգի հետ աշխատելու համար • Բանկային և ֆինանսական ծառայությունների ոլորտում ՖՀՄՍ-ների կիրառական փորձ ունեցող թիմ	• Իրենց դասի մեջ լավագույն ֆինանսական հաշվետվությունները, որոնք ծառայում են որպես օտարերկրյա ցուցակված ընկերությունների և գործարքների մեկնակետ • Ավելի մեծ վստահություն բիզնես գործընկերների, պետական կառույցների, ֆինանսական հաստատությունների և այլ շահագրգիռ կողմերի շրջանում
Արժեք փողի դիմաց	• Բարելավված ծառայություններ մրցունակ գներով • Գործնական մասնագիտական ուղղորդում ՖՀՄՍ բարդ ոլորտներում և և PwC ակադեմիայի կողմից կազմակերպված անվճար դասընթացներից օգտվելու հնարավորություն • Բանկի և ֆինանսական հաստատություններին առնչվող ոլորտների մասնագետների հասանելիություն (համապատասխանություն, կապիտալի շուկաներ, ռիսկերի կառավարում)	• Բարդ տեխնիկական խնդիրների պրոակտիվ լուծումներ՝ նվազագույնի հասցնելով վերջին րոպեին թողնված անակնկալները • Լրացուցիչ արժեք ստեղծող գիտելիքներ Բանկի և ԱԳԲԱ Լիզինգի ռազմավարության իրականացման և գործունեության հաջող արդյունքների գրանցման նպատակով

Ժամկետներ

Բանկի համախմբված տարեկան ֆինանսական հաշվետվությունների և ԱԿԲԱ Լիզինգի 2022, 2023 և 2024թթ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարիների համար ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, ինչպես նաև նույն ժամանակաշրջանների համար Բանկի եռամսյակային ֆինանսական հաշվետվությունների աուդիտ:



Ծրագրի թիմ, Ձեր PwC թիմը

Ակբա Բանկի և ԱԿԲԱ Լիզինգի թիմերի ընտրության մեր ռազմավարությունը նպատակաուղղված կլինի ամենագրագետ և հանձնառու մասնագետների ներգրավմանը: Մենք թիմի ներսում կկազմակերպենք գիտելիքների արդյունավետ փոխանցման գործընթաց:

Այգուլե Ախմետովա
Աուդիտի գործընկեր
Ֆինանսական ծառայություններ

Ալեքսեյ Ռուսանով
Գործադիր տնօրեն
Առանցքային աուդիտորական ծառայություններ

Լևան Կանկավա
Աուդիտի տնօրեն
Ֆինանսական ծառայություններ

Ալեքսեյ Ժուկով
Հարկային տնօրեն
Հարկային ծառայություններ

Հասմիկ Հարությունյան
Հարկային մենեջեր
Հարկային ծառայություններ

Յուրայ Տուչնի
Աուդիտի գործընկեր
Հաշվապահական խորհրդատվական ծառայություններ

Երբոլ Բայմախանով
Մենեջեր
Ռիսկերի ապահովման ծառայություններ

Մեր առաջարկը առաջահայաց միտում ունի, այն նպատակ ունի հասցեագրել աճող պահանջները և ստեղծել լրացուցիչ առավելություններ: Մենք ցանկանում ենք նպաստել ձեր հաջողությանը:

Այնուամենայնիվ, դա կախված է մասնագետներից և ծրագրի գծով նրանց պատասխանատվությունից: Այդ մասին է վկայում մեր առաջարկած թիմի կազմը:

© 2022 PwC. Բոլոր իրավունքները պաշտպանված են. Ենթակա չէ տարածման առանց PwC- ի թույլտվության: «PwC» նշանակում է «ՓրայսուոթերհաուսԿուպերս Ինթերնեյշնլ Լիմիթիդ» (PwCIL) - ի անդամ ընկերությունների ցանց, կամ, ըստ համատեքստի՝ PwC ցանցի առանձին անդամ ընկերություն: Յուրաքանչյուր անդամ ընկերություն առանձին իրավաբանական անձ է և չի գործում որպես PwCIL- ի կամ որևէ այլ անդամ ընկերության գործակալ: PwCIL- ը հաճախորդներին ծառայություններ չի մատուցում: PwCIL- ը չի կրում պատասխանատվություն կամ պարտավորություն իր անդամ ընկերություններից որևէ մեկի գործողությունների կամ բացթողումների համար, ինչպես նաև չի կարող վերահսկել նրանց մասնագիտական դատողությունների իրականացումը կամ որևէ կերպ պարտադրել նրանց: Որևէ անդամ ընկերություն պատասխանատվություն չի կրում որևէ այլ անդամ ընկերության գործողությունների կամ բացթողումների համար, և չի կարող վերահսկել մեկ այլ անդամ ընկերության դատողությունների իրականացումը կամ որևէ կերպ պարտադրել այլ անդամ ընկերությանը կամ PwCIL- ին:

acba

+374 10 31 88 88
www.acba.am

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից